Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄՈՏ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՆ ԺԱՄԸ 13:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Կ. Ճշմարիտյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գ. Մելքոնյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Գ. Պողոսյան	«Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող
Փ. Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Ց. Գևորգյան	«Հայաստանի վաճառականների միություն» ՀԿ-ի նախագահ
Կ. Մարտիրոսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Գ. Խաչատրյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Երիցյան	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար
Ա. Մկրտչյան	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Տ. Բարսեղյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Ա. Հարությունյան	ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Գ. Պետրոսյան	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հիմնադրամի գործադիր տնօրեն

Գ. Պողոսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Ն. Մուսաելյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի բանկային մասնագետ
Ա. Օհանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ-ի զարգացման վարչության պետ
Գ. Պողոսյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Մ. Ղամբարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատն-տեսագիտական վարչության պետ
Տ. Աբրահամյան	«Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվու-թյան և հասարակայնության հետ կապերի վարչության

Հրավիրվածներ՝

Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Դ. Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ

1. Հյուրատնային գործունեությամբ զբաղվող անհատ ձեռնարկատերերին ընտանեկան ձեռնարկատիրության արտոնություններից օգտվելու հնարավորություններ սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ

(Հակոբ Ավագյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանին՝ սահմանված կարգով մշակել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի փոփոխության նախագիծ՝ զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերին հանելով արտոնագրային վճարների դաշտից և հնարավորություն տալ օգտվել ընտանեկան ձեռնարկատիրության արտոնություններից կամ շրջանառության հարկման ռեժիմից:

2. Տեղական տուրքերի սահմանման տարանջատված մոտեցումների կիրառման վերաբերյալ

(Հակոբ Ավագյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ առաջարկել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանին ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանի և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի հետ համատեղ քննարկել «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները՝ հնարավորություն տալով տեղական ինքնակառավարման մարմիններին տեղական տուրքերի բազային դրույքաչափերի նկատմամբ գործակիցներ սահմանելիս բացի գոտիականության չափանիշի կիրառումից հաշվի առնել տվյալ առևտրի կետի մակերեսը և համապատասխան նախագծի վերջնական տարբերակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի դիսպոզիցիայի վերաբերյալ

(Գևորգ Պողոսյան, Հովիկ Աբրահամյան)

1. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) տվյալ հարցերին անդրադառնալ Հարկային օրենսգրքի մշակման աշխատանքների շրջանակներում.

2) ՓՄՁ-ի զարգացման խորհրդի քարտուղարությանը ներգրավել Հարկայի օրենսգրքի մշակման աշխատանքներում՝ վերջիններիս կողմից հարկային մարմինների քննչական լիազորությունների վերաբերյալ իրականացված վերլուծական աշխատանքների և ուսումնասիրությունների քննարկման, ինչպես նաև Հարկային օրենսգրքի ՓՄՁ-ներին վերաբերող հատվածը ՓՄՁ-ի զարգացման խորհրդում քննարկման առարկա դարձնելու նպատակով:

4. ՓՄՁ-ի զարգացման խորհրդի անդամներից մեկի՝ ռոտացիոն ժամանակահատվածի ավարտի կապակցությամբ փոփոխության վերաբերյալ

(Գարեգին Մելքոնյան, Հովիկ Աբրահամյան)

1. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հարցի քննարկումը տեղափոխել խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը՝ հրավիրելով նաև թեկնածու ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանին.

2) խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել տեղեկատվություն ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործունեության վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ